

**Պարզ նախադասության դրսևորումները հայերենի առածներում և
ասացվածքներում՝ ըստ հաղորդակցման նպատակի**

Առած-ասացվածքները ժողովրդական բանահյուսության ամենատարածված ստեղծագործություններն են և պատկանում են վիպական ժանրին, բայց ի տարբերություն վիպական ժանրի մյուս ստեղծագործությունների, առած-ասացվածքներում կյանքի երևույթներն ու հարաբերությունները պատկերվում են առավել սեղմ և պատկերավոր խոսքի միջոցով: Հաճախ մեկ կամ երկու բառով արտահայտվում է ամբողջական բովանդակություն:

Սույն հոդվածի նպատակն է վեր հանել պարզ նախադասության դրսևորումները հայերենի առածներում և ասացվածքներում՝ ըստ հաղորդակցման նպատակի:

Նախադասությունը կառուցվածքային տեսակետից երկու հիմնական տեսակի է բաժանվում՝ *պարզ և բարդ*:

Ըստ հաղորդակցման նպատակի՝ *պարզ նախադասությունները* ժամանակակից հայերենում բաժանվում են չորս խմբի կամ տեսակների՝ *պատմողական, հարցական, հրամայական և բացականչական*: Սրանց հիմնական տարբերակիչ հատկանիշը հնչերանգն է, որը բոլոր պարագաներում պարտադիր քերականական հատկանիշ է այս նախադասությունները զանազանելու համար:

Պատմողական նախադասությունը հայերենի առածներում և ասացվածքներում

Պատմողական նախադասությունը հայերենի առածներում և ասացվածքներում ամենատարածված և ամենաշատ գործածական նախադասությունն է: Այս նախադասություններով խոսողը պատմում, հաղորդում է իր իմացածը, հաստատում կամ ժխտում որևէ իրողություն, սակայն դա ամեննին չի նշանակում, որ դրանք միշտ հաստատական կամ ժխտական բովանդակություն են ունենում, այդ նախադասությունների իմաստը կարող է լինել նաև երկբայական և ենթադրական: Հնչերանգը հանդարտ է, առանց հատուկ շեշտի: Պատմողական

նախադասության ստորոգյալը հայերենի առաձներում և ասացվածքներում կարող է արտահայտվել սահմանական (Պտղատու ծառին ճղները քաշ են լինում (5)¹, Իծանը (այծերը) սարն են գնացել (13), Մուկն էլ է աղանձ ուտում (16)), հարկադրական (Տանտիկինի մի ձեռը գող պիտի ըլնի (203), Պարը մտնողը պտի շորորա (238)), ենթադրական (Դուզ խոսողի գտակը ծակ կըլնի (8), Շունը տիրոջը կը ճանչնա (9), Բանը խելքով կ'երթա առաջ (13), Աստված հալալին կը տա (14)), ինչպես նաև ըղձական եղանակի բայաձևերով (Աչքը կշտանալ չունի (27), Անզգամն աստոծ չունի (39), Սուտը տեղ չունի (41)):

Բերված օրինակներում բոլոր նախադասությունները **երկկազմ** են:

Երկկազմ կոչվում է այն պարզ նախադասությունը, որի մեջ՝ գործող կամ եղող առարկան և նրան վերագրվող հատկանիշը ունեն կամ կարող են ունենալ իրենց քերականական, տարբերակված արտահայտությունը՝ հանձինս ենթակայի և ստորոգյալի²:

Այսպիսի առած-ասացվածքներում բայերը հարկադրական եղանակով քիչ ենք հանդիպում: Դրա պատճառն այն է, որ այս եղանակը ցույց է տալիս հարկադրաբար կատարվելիք գործողություն, մինչդեռ առաձներն ու ասացվածքները ժողովրդական խրատներ են, խորհուրդներ, բայց ոչ պարտադրանքներ:

Հայերենի առաձներում և ասացվածքներում երկկազմ նախադասությունների հետ հաճախ գործածվում են նաև այնպիսի նախադասություններ, որոնցում բացակայում են երկկազմին հատուկ բևեռներից մեկը՝ ենթական, կամ երկուսը միասին՝ թե՛ ենթական և թե՛ ստորոգյալը, բայց հաղորդակցումը տեղի է ունենում, նախադասությունների այս տեսակը քերականության մեջ կոչվում է **միակազմ, միակենտրոն** կամ **միաբևեռ**³:

Միակազմ նախադասություններն ըստ իրենց արտահայտության ձևերի, բաժանվում են երեք հիմնական տեսակի՝ **դիմավոր միակազմ, անդեմ միակազմ, բառ-նախադասություններ**:

¹ Տե՛ս **Ա. Ղանալանյան**, *Առաձանի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1960: Մեր աշխատանքում ներկայացնելու ենք պարզ նախադասության դրսևորումները հայերենի առաձներում և ասացվածքներում՝ ըստ հաղորդակցման նպատակի՝ հիմք ընդունելով Ա. Ղանալանյանի «Առաձանի» բանահյուսական համահավաք աշխատությունը: Հետայսու փակագծերում կնշենք զրքի համապատասխան էջերը:

² **Ս. Աբրահամյան**, *Ժամանակակից հայերենի քերականություն*, «Լույս» հրատ., Ե., 1975, էջ 271:

³ **Խ. Բաղիկյան, Ա. Պապոյան**, *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ 83:

Քննության առնենք դրանք հայերենի առաձներում և ասացվածքներում:

Ա. Դիմավոր միակազմ նախադասություններն արտահայտվում են բայի դիմավոր ձևերով, առանց ենթակայի: Ենթական չկա, և անհնար է կամ հարկ չկա այն վերականգնելու: Դիմավոր միակազմ նախադասությունները հիմնականում պարզ են, թեև երբեմն հանդիպում են բարդ միակազմ նախադասություններ: Դիմավոր միակազմ նախադասությունները, ըստ դիմային իմաստի յուրահատկության, լինում են 3 տեսակ՝ **ձևական դիմավոր միակազմ նախադասություն, անորոշ դիմավոր միակազմ նախադասություն, ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություն:**

ա) Ձևական դիմավոր միակազմ նախադասությունը բնորոշվում է նրանով, որ նրանում դեմքը դիմային վերաբերության տեսակետից ձևական է, և նրանով արտահայտված երևույթը, գործողությունը դիմային տեսակետից որևէ ձևով չի կապվում եղողի, կատարողի հետ⁴: Ըստ գլխավոր անդամի արտահայտության՝ հայերենի առաձներում և ասացվածքներում ձևական դիմավոր միակազմ նախադասությունները լինում են **բայական** և **անվանական**:

Հայերենի առաձ-ասացվածքներում **բայական նախադասությունները** հիմնականում արտահայտվում բայի երրորդ դեմքով (հատկապես միադիմի բայերով). Շիտակ ասողին ձին տակն պետք ա (8), Անպտուղ ծառին քար գցող չի լինի (38), Ասողին էլ լսող է պետք (36), Էրկու գժին մի խելոք է հարկավոր (173):

Անվանական գլխավոր բաղադրիչ ունեցող նախադասությունների հանգույցը ևս արտահայտվում է երրորդ դեմքով և ունի եզակի թիվ. Գժի համար ամեն օր նոր տարի ա (43), Գժին ամեն օր Զատիկ է (43), Թամբալին ամեն օր կիրակի է (34):

Ըստ բովանդակության և կիրառության ոլորտի՝ ձևական դիմավոր նախադասությունները լինում են՝ բնության երևույթներ, ժամանակ, հասարակական, անհատական և այլ կարգի երևույթներ արտահայտող նախադասություններ:

բ) Անորոշ դիմավոր միակազմ կոչվում է այն նախադասությունը, որի դիմային վերաբերությունն անորոշ է. դեմքի ընդհանուր քերականական իմաստը չի մասնավորվում որոշակի առարկայի վերաբերմամբ, այլ մնում է անորոշ⁵: Այսպիսի նախադասություններում անորոշությունն արտահայտվում է ոչ միայն նրանով, որ

⁴ **Ս. Աբրահամյան, Ն. Պատնապյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու,** Շարահյուսություն, հ. 3, Ե., 1976, էջ 473:

⁵ Նույն տեղում, էջ 478:

հայտնի չէ թե ո՞վ է գործողություն կատարողը, այլև հաճախ հայտնի չէ՝ գործողություն կատարողը մե՞կն է, թե՞ մի քանիսը: Անորոշ դիմավոր նախադասությունների գլխավոր անդամը հայերենի առածներում և ասացվածքներում արտահայտվում է՝

1. Սահմանական եղանակի անցյալ կատարյալի հոգնակի երրորդ դեմքով՝
Շունը կապին խացին տաշտեն (106), Դարբինը փետե փետատով հորեցին (246):

2. Սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքով՝
Ջորով շունը կապում են պանրի տկից (91), Սիրունի հետ փլավ չեն ուտըմ (64), Չորի հետ թացն էլ են վառըմ (108), Հերվա մեռելը էս տարի չեն թաղում (133):

3. Սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի երկրորդ դեմքով՝
Ջոռով փեշդ գոմշի պոզին էս քցում (91):

4. Սահմանական եղանակի վաղակատար ժամանակի հոգնակի երրորդ դեմքով՝

Փողը պիծի (փոքր) աստուած են անվանել (248), Սարերուն կաքավը մարմանդը (դաշտը) հապս են արել (բանտարկել) (110):

գ) Ընդհանրացնող-դիմավոր են կոչվում այնպիսի միակազմ նախադասությունները, որոնց ստորոգյալի գործողությունը հավասարապես վերաբերում է բոլոր դեմքերին. դեմքը միայն ձևական նշանակություն ունի և արտահայտման միջոց է⁶: Ընդհանրացնող դիմավոր նախադասությունները հաճախ առած-ասացվածքներ են, որոնք խորհուրդներ և խրատներ են պարունակում:

Ընդհանրական դիմավոր միակազմ նախադասության գլխավոր անդամը հայերենի առած-ասացվածքներում արտահայտվում է բայի հետևյալ դիմավոր ձևերով՝

1. Ենթադրական եղանակի հոգնակի երրորդ դեմքով. Շիտակ խոսքը հանաքով կասեն(8): Կաթնատուր կովի պտկին չեն թքի (6): Կաթ տվող կովի պտուկը չեն կտրի (6): Ամակտարի (երախտավոր) ամակը (երախտիքը) չեն մոռանա (9): Շան կաղալուն չեն հավատա (31):

2. Սահմանական եղանակ

⁶ Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, *Հայոց լեզու, Շարահյուսություն, մաս երկրորդ*, «Լույս» հրատ., Ե., 1975, էջ 227:

ա) *անկատար ներկա (եզակի և հոգնակի)*՝ Մեկ եզնով քարվանի մեջ ա մտնում (16), Մկան ծակը հարուր թումանով է առնում (42), Սրբի դուռն էլ առանց խաչհամբուրի չեն գնում (252):

բ) *վաղակատար ներկա*՝ Սատանից օխտն օր առաջ է ծնվել (9), Սամաթելով գութնին ընկեր ա ըլել (109), Ծովի երեսին այլուր եմ մաղել (317):

գ) *անցյալ կատարյալ ժամանակով*՝
Լվի մը համար յորդանը (վերմակ) վառեց (96), Գալուն աչիցը առավ (163), Ընկավ մոլլի կտուրը (անդարձ կորավ) (313):

3. *Ընդական եղանակի եզակի երկրորդ դեմքով*՝ Չը կանչած տեղը կերուխումի չերթաս (199), Սովորած լավ փեշակդ հետդ գերեզման չտանես (247):

4. *Ընդհանրական անենթակա նախադասություններ* են կազմվում նաև չեզոք սեռի և նրա կրավորաձև բայերի եզակի երրորդ դեմքով: Օրինակ՝ չի նստվում, չի նայվում: Այսպիսի նախադասություններ հայերենի առած-ասացվածքներում չենք հանդիպում:

5. *Ընդհանրական անենթակա նախադասություններ են կազմվում նաև մարդ բառով*: Առած-ասացվածքներում *մարդ* բառը հիմնականում հանդիպում է լրացման հետ՝ ամեն մարդ. Ամեն մարդ կրակը իր բաղարջի տակ կքաշե (23), Ամեն մարդ կրակն ուր ձվաձեղի տակ կուտա (23), Ամեն մարդ կրակն իր կուկուին (կլոր հաց) կը քաշե (23), Ամեն մարդ մեկ-մեկ խելքի կը ծառայե (156):

Դիմավոր միակազմ նախադասության երեք տեսակներից առած-ասացվածքներում գերազանցապես հանդիպում ենք ընդհանրական-դիմավոր նախադասությունների:

Հայերենի գրական ուսումնասիրություններում ընդունված է նաև նման դիմավոր միակազմ նախադասությունները կոչել ընդհանուր մեկ անվանումով՝ անենթակա նախադասություններ⁷ :

Բ. Ի տարբերություն **դիմավոր** միակազմ նախադասությունների, որտեղ կա դիմավոր բայ, **անդեմ** նախադասություններում այն չկա: Անդեմ նախադասության

⁷ Տե՛ս Մ. Գյուլբուրդյան, *Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում*, «Միտք» հրատ., Ե., 1967, էջ 29-122, Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն*, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1987, էջ 180-185, Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 371-373, Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Ե., 1974, էջ 394-396:

դեմք չունենալու առանձնահատկությունը բնականաբար որոշ դժվարություններ է ստեղծում նրա, որպես մտքի միավորի, ըմբռնման և գործածության հարցում: Այդ պատճառով էլ անդեմ նախադասությունների դրսևորման և գործածության հարցում առանձնապես էական դեր են կատարում հնչերանգային ավարտվածությունը և խոսքը: Ըստ այն հանգամանքի, թե անդեմ նախադասության գերադաս անդամն ինչ խոսքի մասով է արտահայտված, բաժանվում է երկու խմբի՝ **բայական** և **անվանական**: **Բայական** անդեմ միակազմ նախադասությունների գերադաս անդամը հայերենի առածներում և ասացվածքներում արտահայտվում է բայով, գերազանցապես՝ անորոշ դերբայով. Առանց սատանի պատարագ անել (84), Ժամին բակը խաղք անել (94), Բուրդը բարերար անել (զգել) (310), Շան բերանից ջուր խմել (չարչարվել) (323):

Միակազմ նախադասությունների մյուս տեսակն **անվանական** նախադասություններն են, որոնց գլխավոր անդամը հայերենի առածներում և ասացվածքներում արտահայտվում է գոյականով, որոշ դեպքերում նաև ածականով: Անվանական նախադասությունները կիրառվում են առանց բայական հանգույցի, չունեն քերականական ստորոգում. Դարմանի տակի ջուր (32), Թամբալին համար շաբթումն օխտը կիրակի (34), Քյաչալ գլխին ոսկե սանտր (331):

Միակազմ նախադասությունների մի հատուկ տեսակ են **բառ-նախադասությունները**, որոնք արտահայտվում են մեկ բառով, լրացում չեն ունենում և նախադասության անդամ չեն դառնում: Հայերենի առած-ասացվածքներում այսպիսի նախադասություններ չեն հանդիպում:

Պատմողական պարզ նախադասության ստորոգյալը հայերենի առածներում և ասացվածքներում հաճախ լինում է նաև **բաղադրյալ**.

Երկկազմ բաղադրյալ՝ Դուզ (ուղիղ) խոսողի գլուխը ծակ է (7), Ղորդ (ճշմարիտ) գուրցողի գլուխը կոտոշով (պոզ) է (8), Մարդուս աչքը ծակ է (27), Ընկերովի մահը հարսանիք է (211):

Միակազմ բաղադրյալ՝ Լվից եղ հանող ա (26), Մութ տեղը մագ մանող է (27): Ըստ գլխավոր և երկրորդական անդամների առկայության՝ հայերենի առած-ասացվածքներում առանձնացնում ենք պատմողական **պարզ համառոտ** և **ընդարձակ նախադասություններ**.

Համառոտ է կոչվում այն պարզ երկկազմ կամ միակազմ նախադասությունը, որ բաղկացած է միայն գլխավոր անդամներից կամ անդամից⁸. Վերնատունը դատարկ է (13), Տախտակը պակաս ա (13), Ցանողը կը քաղե (121):

Ընդարձակ է կոչվում այն պարզ նախադասությունը, ուր գլխավոր անդամների կամ անդամի հետ գործածվում է թեկուզ մեկ երկրորդական անդամ⁹. Յոթ ծով մե թել մածնով կը ներկի (10), Սարսաղ (հիմար) գլխի ձեռից ոտները հավար (օգնության կանչ) կը կանչեն (11), Կովին ձենը հեռվեն անուշ կը գա (128):

Պատմողական նախադասություններն՝ ըստ ստորոգման բնույթի լինում են երկու տեսակ՝ **հաստատական** և **ժխտական**:

Հաստատական նախադասությունն արտահայտում է կատարվող, կատարված և կատարելի գործողությունների, երևույթների հաստատում, այսինքն ցույց է տալիս, որ առարկայի և նրա հատկանիշի միջև գոյություն ունի կապ¹⁰. Ձու ածող հավը կչկըչան կըլնի (5), Բարատու (պտղատու) ծառը գլուխը կախ կը գցի (5):

Ժխտական նախադասությունը բացառումն է այդ հաստատման, այսինքն ցույց է տալիս, որ առարկայի և նրա հատկանիշի միջև կապը բացակայում է¹¹:

Ժխտումը ժամանակակից հայերենում արտահայտվում է **չ** և **ոչ** ժխտական մասնիկների միջոցով և լինում է լրիվ ու մասնակի:

Ըստ Մ. Ասատրյանի՝ ժխտումն արտահայտվում է նաև **մի** մասնիկի միջոցով, որը դրվում է միայն դրական հրամայականի վրա՝ կազմելով արգելական հրամայականի ձևերը¹². (Անխելքի չվանով (պարան) հոր մի մտնի (12), Էսավուր բան մի թողնե վաղվան (134), Ուրիշի ձեռով փուշ մի բռնե (141):

Արգելական հրամայականի դեպքում շեշտը բուն բայաձևից տեղափոխվում է **մի** մասնիկի վրա: Հայերենի առաձներում և ասացվածքներում, բացի հրամայականից, մյուս բոլոր բայաձևերը ժխտականի են վերածվում **չ** մասնիկի միջոցով¹³. (Շիտակ ասողը տեր չունի (8), Ցած տալեն (ճյուղ) թուր չուտեր (19), Ձեռքեն կորեկ չթափի (26):

⁸ Մ.Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, *Հայոց լեզու, Շարահյուսություն, մաս երկրորդ*, «Լույս» հրատ., Ե., 1975, էջ 131:

⁹ Նույն տեղում, էջ 131:

¹⁰ Մ. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, *Հայոց լեզու, Շարահյուսություն, մաս երկրորդ*, «Լույս» հրատ., Ե., 1975, էջ 114:

¹¹ Նույն տեղում, էջ 114:

¹² Տե՛ս Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն*, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1987, էջ 127-128:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 128:

Հարցական նախադասությունը հայերենի առածներում և ասացվածքներում

Հարցական կոչվում են այն նախադասությունները, որոնք արտահայտում են հարցում¹⁴:

Այս նախադասությունների առավել բնորոշ և ընդհանուր հատկանիշը հարցական հնչերանգն է, որը գրավոր խոսքում արտահայտվում է հարցական նշանով: Սովորաբար պարզ հարցական նախադասությամբ միայն մեկ հարց է տրվում, հետևաբար և նախադասության միայն մեկ անդամ է արտահայտվում հարցականով: Հարցումը համընկնում է նախադասության տրամաբանական շեշտի հետ. այն դառնում է տրամաբանական շեշտի դրսևորման ձև և հաճախ դրվում է ստորոգյալի վրա, սակայն տրամաբանական շեշտի տեղափոխության պատճառով հարցման տակ կարող են առնվել նախադասության այլ անդամներ ևս. ինչպես օրինակ՝ ենթական, նյութական իմաստ չունեցող մի շարք բառեր, շաղկապներ, կապեր և նույնիսկ լեզվական այնպիսի միավորներ, ինչպիսիք են վանկը, հնչյունը, բայց վերջիններս, իհարկե, փոխանվանաբար գործածվելիս:

Սակայն, ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, նախադասության տարբեր անդամների, տարբեր բնույթի բառերի՝ հարցման հնչերանգով գործածվելու միջև հավասարության նշան չի կարելի դնել, նախադասության անդամներից այս տեսակետից առանձնանում է ստորոգյալը, որը համեմատաբար ավելի շատ է հանդես գալիս որպես հարցում կրող¹⁵:

Հարցական նախադասությունների ստորոգյալը քերականական տեսակետից որևէ առանձնահատկություն չունի և հայերենի առած-ասացվածքներում արտահայտվում է **սահմանական** եղանակով:

Սահմանական եղանակ՝ Շիտակ ըսողը դո՞ւն մնացիր (8): Մեղավորին ո՞վ է տվել արքայություն (132):

Հարցական պարզ նախադասությունների ստորոգյալը հայերենի առածներում և ասացվածքներում կարող է նաև **բաղադրյալ** լինել՝ Ձիու բազարում (շուկա) էշն ընչացո՞ւ ա (233), Աշխարհը խոփո՞ւմ է ծակած (անտերություն հո չի) (308):

Հայերենի առած-ասացվածքներում հարցական բնույթ կարող են ունենալ նաև որոշ **դիմավոր միակազմ** նախադասություններ.

¹⁴ Ս. Աբրահամյան, *Մասնականից հայերենի քերականություն*, «Լույս» հրատ., Ե., 1975, էջ 346:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 348:

Անորոշ դիմավոր միակազմ նախադասություններ՝ Շիտակ գուրցող քե՞զ են դրեր (8), Դալլաքությունդ իմ գլխի՞ն ես սովորում (168):

Հնդհանրական դիմավոր միակազմ նախադասություններ՝ Էկել ես տերտերի ուին ջո՞ւր խփես (ուշացած վրա հասնել):

Բայական անդեմ միակազմ նախադասությունները, հարցական հնչերանգով գործածվելով, արտահայտում են հարցում՝ տարբեր նպատակներով. Ա. Ղանալանյանի «Առածանի» ում նման կառույցներ չենք հանդիպում:

Անվանական միակազմ նախադասություններ՝ Խարս վեր ձիուն վի՞ր (ուս) կըսմաթ (հասանելիք) (271):

Ըստ ստորոգման բնույթի՝ հարցական պարզ նախադասությունները հայերենի առածներում և ասացվածքներում լինում են **հաստատական** և **ժխտական**՝

Հաստատական՝ Գիլու բնի բոլոր օսկոր իսկի կնեկնա՞ (27), Գոմի մեջ գա՞ն գտար (311), Փուճ գյոզով (ընկույզ) կուզես օյի՞ն (խաղ) մտնես (329):

Ժխտական՝ Շեն տուն չկա՞քո շուն (324):

Այսպիսի նախադասությունները սովորաբար, եթե ունեն հաստատական բնույթ, ապա մտքով ժխտական են լինում, ժխտում են արտահայտում, և ընդհակառակն, եթե ձևով ժխտական են, մտքով լինում են հաստատական:

Հրամայական նախադասությունը հայերենի առածներում և ասացվածքներում

Հրամայական նախադասություններն արտահայտում են խոսողի թելադրանքը՝ կատարելու որևէ գործողություն ¹⁶ : Հնչերանգին բնորոշ է սուր շեշտը, որը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով:

Հայերենի առածներում և ասացվածքներում հրամայական նախադասության ենթական մեծ մասամբ գեղջվում է, որովհետև բայի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ ենթական խոսակիցն է: *Դու, դուք* դերանունները հրամայական նախադասության մեջ կիրառվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում զատել կամ շեշտել նրան կամ նրանց, ում ուղղված է հրամանը:

Երկկազմ հրամայական նախադասություններ. Անցկացած օրին մի՛ ափսոսա (129), Անցկացած բանին մի՛ ափսոսա (129), Էսօրվա բանը էքուցվա մի՛ գցի (134), Անջուր մի՛ բոբկացի (136), Փորձվածին մի՛ փորձիր (284):

¹⁶ **Ս. Աբրահամյան**, *Ժամանակակից հայերենի քերականություն*, «Լույս» հրատ., Ե., 1975, էջ 353:

Հրամայական երանգի նախադասությունների շարքը պետք է դասել նաև այնպիսի **միակազմ** դիմավոր նախադասություններ, որոնց ստորոգյալն արտահայտված է բայի երկրորդ դեմքով՝ (միակազմ նախադասության հրամայական բնույթի ձևավորման համար շեշտը համեմատաբար ավելի անհրաժեշտ է դառնում):

Ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություն՝ Ծռուն դատավոր չե՛ն էնե (12), Դեդ ունիս քո գլխի՛ն արա (45), Խապարին (լուր) աղեկը կնիկներե՛ն առ (67), Ոտդ կարպետովդ մի՛ն արա (139):

Անդեմ նախադասություններից հաճախ որպես հրամայական են գործածվում այնպիսիները, որոնց գերադաս անդամն արտահայտված է անորոշ դերբայով, ունենում է շեշտ, արտահայտում է հրաման, կոչ, կարգադրություն և այլն. առած-ասացվածքներում նման նախադասություններ չեն հանդիպում:

Ըստ ստորոգման բնույթի՝ հրամայական պարզ նախադասությունները հայերենի առածներում և ասացվածքներում լինում են **հաստատական** և **ժխտական՝**

Հաստատական՝ Թանկ տարին զարբա՛բ (մետաքս շոր) հագիր (313):

Ժխտական՝ Երկու աչքիդ մեկին մի՛ հավատա (7), Անցավել գլուխդ մի՛ ցավեցնի (158):

Բացականչական նախադասությունը հայերենի առածներում և ասացվածքներում

Բացականչական նախադասություններն արտահայտում են ուրախություն, զարմանք, կոչ, հիացմունք, ափսոսանք և այլն: Այս նախադասությունների բնորոշ հատկանիշը յուրահատուկ բացականչական հնչերանգն է, որը կարող է լինել նախադասության տարբեր անդամների վրա: Մեծ մասամբ բացականչական հնչերանգը ընկնում է այն բառերի վրա, որոնք առավել բնորոշ են բացականչական նախադասության համար: Ի տարբերություն հարցական նախադասության, որի միայն մեկ անդամն է արտահայտվում հարցականով, բացականչական հնչերանգով կարող են արտահայտվել միևնույն նախադասության մեկից ավելի անդամներ:

Բացականչական նախադասությունը հատուկ հնչերանգից բացի ունի կառուցվածքային այլ հատկանիշներ ևս: Նրա ստորոգյալը հայերենի առածներում և ասացվածքներում արտահայտվում է բայի ըղձական և ենթադրական եղանակներով:

Երկկազմ բացականչական նախադասություններ՝ Մի խելքը ամառ-ձմեռ ի՛նչ կանի (12), Էշին անեծքը կյուլին հի՛նչ անե (91), Աղվեսը փողոցումն ի՛նչ բան ունե (154), Վա՛յ խապարը (տխուր լուր) թեզ տեղ կը հասնի (165):

Հայերենի առած-ասացվածքներում բացականչական նախադասությունները երբեմն կարող են արտահայտվել ոչ թե **սովորական բացականչությամբ**, այլ **շեշտով**: Բերենք օրինակներ՝ Դվեն (ուղտ) իր կուզը չի՛ տեսնիլ (45), Շնեն գառ չի՛ ծնի (56), Կուրի առաջ հա՛ դու ճրագ վառի (36):

Բացականչական նախադասությունների շարքում կարևոր տեղ են գրավում նաև **անդեմ** նախադասությունները. առած-ասացվածքներում հատկապես տարածված են **անվանական անդեմ** կազմություն ունեցող նախադասություններ՝ Գժեն դրուստ ջո՜ւղաբ (խոսք) (12), Աղջկանը ի՜նչ վաթան (65), Ուրիշի փորն ինձ ի՜նչ շահ (141), Գժից ուղիղ խո՜ւսք (166), Դիվու տնեն խնկան հո՜ւտ (169):

Առած-ասացվածքներում հանդիպում ենք նաև **դիմավոր** միակազմ նախադասություններ՝ Անգլուխ սամու պես ո՜ւր ասես մտնում է (50), Գիլու ահու գիղ չը շինի՜նք (88), Ծուռ եզանը «պո՜» արին (98), Թամբալ եզանը մի «հո՜» է պետք (174):

Այսպիսով, ամփոփելով պարզ նախադասության դրսևորումները հայերենի առածներում և ասացվածքներում՝ ըստ հաղորդակցման նպատակի, կարելի է հանդիպել նախադասության բազմազան դրսևորումներ՝ համառոտ և ընդարձակ, միակազմ և երկկազմ, հաստատական և ժխտական, ընդ որում, նախադասությունների այդ դրսևորումների շրջանակներում կարելի է ցույց տալ հայերենի լեզվաքերականական հնարավորությունների անսպառ իրացումները և բացահայտել նրանց ոճական արժեքը: